ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք. Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ -3-Ե- Հ-4664

«6» հունիսի 2022թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ Գ. ԱՐՇԱԿՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-22/06» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգով Դատական դեպարտամենտի կարիքների համար արխիվացման ծառայությունների մատուցման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի արդյունքում 20.05.2022թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-22/06-2» պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ՝ 72 000 000 (յոթանասուներկու միլիոն) ՀՀ դրամի չափով:

Վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկվում է կնքել համաձայնագիր:

Կից ուղարկվում է կնքվելիք համաձայնագրի նախագիծը և առաջարկվում՝ համաձայնության դեպքում կնքել այն երկու օրինակից և գրությամբ ներկայացնել Դատական դեպարտամենտ (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1), միաժամանակ փոխարինելով տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների մասով, երաշխիքներով կամ կանխիկ փողով:

Որակավորման ապահովումը ներկայացվում է կանխիկ փողի, կամ բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքների ձևով: Ընդ որում, ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև պայմանագրի (համաձայնագրի) կատարման արդյունքը պատվիրատուի կողմից ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող 90-րդ աշխատանքային օրը ներառյալ: Երաշխիքի ձևով որակավորման ապահովումը ներկայացվում է «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-22/06» ծածկագրով ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևի՝ Հավելված 3.1-ի, համաձայն, իսկ կանխիկ փողի ձևով ներկայացվող որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին:

Պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Պայմանագրի ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքվելիք պայմանագրով (համաձայնագրով) սահմանվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող 90-րդ աշխատանքային օրը ներառյալ: Բանկային երաշխիքի ձևով պայմանագրի ապահովումը ներկայացվում է «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-22/06-2» ծածկագրով ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևի՝ Հավելված 4-ի, համաձայն, իսկ կանխիկ փողի ձևով ներկայացվող պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000664» գանձապետական հաշվին:

Որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի (նախատեսված ֆինանսական միջոցների մասով) 30 տոկոսին, իսկ պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի (համաձայնագրի) գնի 10 տոկոսը:

Առդիր՝ 9 էջ:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կատ.՝ Նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչություն, Գնումների համակարգման բաժին
Հեռ.՝ /+37410/ 511-792, 511-788